

ՏԻԳՐԱՆՈՒՅԻ

պատմական դրամա հինգ արարտածով

ԼԵԽՈՆ ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑԻ

(Եաբունակութիւն 1)

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐԻԱԾ

Աժդահակի պալատը. վասուաւոր ճեմելիք:

Տիգրանուհին՝ շքեղ գահաւորակի վերակ թեք ընկած նալում է հեռու մանում է Աժդահակը և կամաց կամաց մօտենալով նառում է կողքին.

ԵՐԵԽՈՅԹ. I

ԱԺԴԱՀԱԿՈՒ (Համբուրելով)

Առողջութիւնը, ով մեծ թագուհի
թագուհիներին

ՏԻԳՐԱՆՈՒՅԻ

Ենորհակալ եմ; Իսկ դու ինչպէս ես;

1) Տես «Մուլք» № 1.

ԱՃԴԱՆՀԱԿ

Քանի դու ինձ հետ ես, Տիգրանուհի,
 Տըկարութիւնը մի՛թէ կը յանդնէ
 Ինձ մօտիկանսալ, երբ քո մի հայեացքդ
 Դեղ ու դարման է ամեն մի ցաւի,
 Երբ իւրաքանչիւր քո մի հընչիւնը հեռու է վանում
 Ամենայն մի վիշտ։ Ես երջանիկ եմ
 Եւ կենդանի եմ քեզանով միայն։
 Բայց մինչև այսօր չը կարողացայ
 Հասկանալ մի բան. Բ'նչ է պատճառը,
 Որ այդ թափիծը և այդ մըսավը՝
 Ամպերի նըման քո դէկըին սեցած՝
 Երբէք չեն ցըրւում և չեն հեռանում։
 Մի անգամ գոնէ ես քո երեսը
 Չը տեսայ պայծառ։

ՏԻԳՐԱՆՈՒԴԻ

Կարհղ թագաւոր,
 Այստեղ բոլորը — նոր է ինձ համար
 Բոլորըն օտար, կը գոյ ժամանակ
 Ես կընտելանամ։

ԱՃԴԱՆՀԱԿ

Ինչ կուզես, ասմա Բայց կարծես մի վիշտ
 Քայքայող մի ախտ՝
 Անդադար ուտում մաշում. է հոգիդ,
 Ինչպէս մի գարշ որթ կեղեւի տակից,
 Որ գիշեր-ցերեկ մաշում է ծառը։
 Վաղ արշալուսից մինչև վերջալոյս
 Այս ճեմելիքից դու չես հեռանում
 Եւ դէպի հիւսիս աչերըդ յառած՝
 Նայում ես անթարթ և մըտքամոլոր։
 Օ՛ մե՛ծ թագուհի, մի՛թէ ոչ մի բան
 Քեղ չը դրաւեց այստեղ, այս շըքեղ

Քո շըրջակացքում Ո՛չ մարդարտափայլ
 Այս շատըրւանը, ոչ այս կաթիներըն,
 Որ նախանձալոց անուշ զովութեամբ
 Համբոյք են տալիս քո լի այտերին
 Ո՛չ այն դալարը, ոչ այն ծառերի
 Մեզմ սօսաւինը և ոչ երգեցիկ
 Այն սոխակները, որ այնքան աշխոյժ
 Դեղգեղանքներով
 Քո ուշքն ու միտքն են ուզում թովել
 Ոչինչ, մի խօսքով, չէ արժանանում
 Քաղցր նայւածքիդ,
 Բացի հեռաւոր այն հիւսիսային
 Մերկ հորիզոնից Խ՞նչէ քեզ այնոեղ
 Այդպէս կախարդել ինչըդ է պակաս:
 Խ՞նչ ես կամենում, որ այս բոպէիս
 Ես կատարեի. Բ՞նչ ես կամենում
 Երկըրիս երեսից ջընջւէր բընաւին:
 Այս կամ այն ծաղիկըն գուցէ չը կաց
 Քո ծաղկանոցում, կամ թէ զուա ոսկուց
 Կամենում ես գու ձուլեն քո սենեակ,
 Կամ ականակուռ քո հանդերձանքը
 Գուցէ դեռ կարօս է գոհարների:
 Ասմ բոլորը Բ՞նչ ցանկանում ես՝
 Այդքան ծածկամիտ մի' լինիր ինձ մօտ.
 Սիրաըդ բաց պահիր ինչպէս ճակատըդ.
 Իմ գանձարանիս երկաթէ դռներըն,
 Որ անհիւրընկալ անմատչելի են
 Բոլորի համար, բաց են քո առջև:
 Եւ կըրէսուըն՝ աշխարհահըռչակ
 Իւր կարողութեամբ չէ կարող մըրցել
 Իմ գանձարանիս հարըստութեան հետ:
 Հըրամայիր գու ինչ կամենում ես:

ՏԻԳՐԱՆՈՒՀԱՆ

Կարող թագաւոր

Նաղիկ, կամ ըզգեստ, արծաթ կամ ոսկի
Ազնիւ քարեր և աղամանդ
Ձեն կարող հեռու քըշել ինձանից
Իմ այս թախիծը:

ԱԺԴԱՀԱԿ

Անդին թագուհի, տեսնում ես դու ինձ,
Ես, որի առաջ ծունը են դընում
Հազար հազարներ, ես, որի ձայնից
Իմ ողջ Մարաստանըս ծայրէ ի ծայր
Ցընցւում է յանկարծ ինչպէս կայծակից.
Որի մի խօսքից կախւած է — մեռնել
Թէ ապրել մարդուն, — ես քո առաջին
Խոնարհ գերի եմ: —
Ըսկըսած այն օրից երբ քո աչերըն,
Խնչպէս զոյտ աստղ լուսաւորեցին
Իմ այս պալատը, մի բան չէ շարժւել
Խւր տեղից առանց քո հաւանութեան.
Իմ պատէրները, իմ հըրամանը —
Վաւերացւել են միշտ քո վեհադոյն
Համաձայնութեամբ:
Ամբողջ տէրութեան ղեկը քո ձեռին, —
Դու դարձեալ դժգո՞ն, դարձեալ մըտաստանջ:
Միթէ, ինձ ասե, քո հայրենիքում
Վայելում էիր դու այս անսահման
Փառք ու պատիւը ու պատկառանքը:
Նայիր քո շուրջըդ,
Եւ ասե ինչ բան քո հայրենիքում
Դու գըտնում էիր, և այստեղ չը կայ,
Կամ ինչ առաւել շըքեղ էր այնտեղ,
Այստեղ առաւել տըգեղ ու վատթար:
Տես — սըրբանւէր ահա մեր էլենդ՝

Պըճնւած անթառամ բուսականութեամբ,
Որ, ինչպէս ողի, Ահուրա-Մազդին
Դիտում է իւր շուրջ պայծառ գագաթից՝
Զար Ահրիմանի հողմերի դիմաց
Ամուր ախոյեան կանգնած մեզ համար;
Ասա, մըն է առաւել շրքեղ—
Մեր մըշտականաւ այս սուրբ էլեւնդը,
Թէ ձեր չոր-ցամաք, ձեր ժէռու Մասիս:
Համեմատիթ, տես, —արծաթապարիսպ
Ահա ոսկեփազ իմ Եկրատանը,
Եւ այստեղ հեռու ձեր Արմաւիրը—
Խչմա ես լլուել չես խօսում ոչինչ:

ՏԻԳՐԱՆՈՒՃԻ

Ի՞նչ ասեմ, արքայ, —չը գիտեմ ինքըս:

ԱԺԴԱՀԱԿ

Ո՛հ, ես լաւ գիտեմ—Դու ինձ ասում ես.
Ես ծերացել եմ, իսկ դու տակաւին
Մաղիկ հասակում: Ես գիտեմ նոյնպէս
Որ իմ նայւածքըն անդամ ատելի
Եւ անտանելի է քեզ համար:

ՏԻԳՐԱՆՈՒՃԻ

ԵՐԲԷՇՔ,

Ատել այն մարդուն, որ ինձ սիրում է,
Որ կենդանի է միայն ինձանով, —
Ես այդ կարող չեմ, բարի թագաւոր:

ԱԺԴԱՀԱԿ

Ո՛հ թռղ համբուրեմ

Քո անուշաբոյր շըրթունքները,
Այդ քո խելացի խօսքերի համար:
(Քեք է ընկնում նրա ծնկների վերա)
Այստեղ ճակատիս

Զեռըդ դիր և տես՝ թէ ի՞նչ եռանդով
Աւ պինդ զարկում են այս երակները.
Այդպէս ուրեմըն դու ի՞նչ ուղմում ես:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Այս:

ԱԺԴԱՀԱԿ

Սակայն մւմ մեզնից աւելի՝
Ի՞նձ թէ քո եղբօր:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Ի՞նչպէս յանդզնեմ
Ես համեմատել. — նա եղբայրը է,
Դու ամուսինը:

ԱԺԴԱՀԱԿ

Բայց թէ իմանաս
Թէ ի՞նչ պըտուզ է քո այդ եղբայրը,
Սարսափած իսկոյն դու կը հրաժարւես
Քո այն պաշտելի արինակցիցը:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Ի՞նչպէս, թագաւոր: Ե՞ս կը հրաժարւեմ
Նորանից—երբէ՛ք:

ԱԺԴԱՀԱԿ (Նատելով)

Լըսիր ուրեմըն. Նոյնպէս մի որթն
Իմ սիրտը է ուտում և գիշեր ցերեկ
Հանգիստ չէ տալիս: Քընիս մէջ անգամ,
Երբ տանջանքները նիրհում են մեզ հետ,
Խըլացած որթըն զարձեալ անընդհատ
Կը: Ճում է ներքուստ: Օ՛հ, Տիգրանուհի,
Գեղ յայտնի չէ թէ քո այն եղբայրը
Ի՞նչ օձ է եղել—հարիւր զըլիսանի ահոելի վիշապ:
Թէ իմանացիր քանի՛ գիշեր եմ

Ես լուսացըրել աչքաբաց, արթուն...
 Երբ զօրեղ քնից ես յաղթահարւած
 Խըփում եմ աշքերս, նայում եմ—ահա
 Այս գոռ հըրէշն
 Առաջիս կանդնած անդընդանման
 Իւր բերանը բաց՝ ըսպառնում է ինձ:
 Ես դողդողալով
 Ուզում եմ գոռալ, թիկնասպահներիս
 Օգնութիւն կանչել—
 Զայնըս մեռնում է դեռ կոկորդիս մէջ,
 Փախչել եմ ուզում—ոտներըս մեխւած
 Զեն շարժւում տեղից...
 Անգին թագուհի, պիտի չըքանայ
 Այդ գոռ վիշապը.

ՏԻԳՐԱՆՈՒԶԻ

Բայց ի՞նչու արդեօք նա, որին մի ժամ
 Դու կոչում էիր սըրտացաւ եղբայր,
 Անգին բարեկամ,
 Այժմ, ինչպէս ժանտ, սոսկալի վիշապ,
 Քեզ գիշեր ցերեկ հանգիստ չէ տալիս
 Եւ երազներում տանջում է հողիդ:

ԱԺԴԱՀԱԿ

Դու ինձ լաւ լըսիր: Հէնց այդ է խընդիրն:
 Սաստիկ գըրգոււած նա իւր կնոջից,
 Որի սրահ մէջ քո փառք ու պատին
 Նախանձ է փառել, ըսպառնում է ինձ—
 Բընաջինջ անել, կործանել ամբողջ
 Իմ տէրութիւնը. իմ ժողովուրդըս
 Հըպատակելսվ՝ գերի դարձնել
 Եւ քեզ քո փառքի այս լոյս-գագաթից
 Վայր ձըգել ներքև: Հասկացմը հիմա:

ՏԻԳՐԱՆՈՒՅԻ

Իմ եղբակը օ՛հ. սըխալւում ես դու:
Երկինքը վըկայ—անկարելի է...

ԱԺԴԱՀԱԿ

Երկինքը վըկայ, նա թշնամիս է,
Նա արիւնարրու իմ թշնամիս է:
Եթէ ոչ-ի՞նչու է նա շարունակ
Օգնում կուրուշին, թունաւոր օձին,
Որ իմ արիւնիցըս ծնունդ առած՝
Իմ դէմ է սըրում իւր ատամները:
Ինչմու չէ քանդում
Նա իւր կապերըն իմ թշնամու հետ:
Եթէ ոչ—ի՞նչմու նոյն չարագուշակ
Սոսկալի երազն կըրկնում է միշտ:
Ինչմու խորիմաստ երազաբաններս
Իմ ականջիս տակ միշտ միաբերան
Որոտում են թէ. ըսգաստ կացիր դու,
Կարող թագաւոր. քո ազգականը,
Քո դաշնակիցը քեզ մահ է սպառնում:
Եթէ ոչ—ի՞նչմու իմ լըրտեսները,
Որ ամենուրեք սրատես աչքերով
Դիտում են գաղտնի եղելութիւններըն,
Որ կատարում են այս այն անկիւնում,
Ինչմու միշտ նոքա չարագոյժ լուրեր
Են ինձ հասցընում. «ըսգաստ կացիր դու
Կարող թագաւոր. թէ արևելքից
Եւ թէ հիւսիսից քամիների հետ
Միշտ արեան հոտ է փչում դէպի մեր
Խեղճ հայրենիքը: Ի՞նչ խորհուրդ ունին
Այս սե, բօթալից այս համբաւներըն:

ՏԻԳՐԱՆ

Վըկայ լինի իմ և քո արևը,

Անկարելի է, որ իմ եղբայրը...

ԱԺԴԱՀԱԿ

Վըկաչ լինի քո և իմ արել
Անկարելի է հականառելլն:
Արդէն որոշած և վրճռուած է —
Իրար ոխերիմ թրշնամիներ ենք,
Եւ նա անպատճառ երկրի երեսից
Շուտ պէտք է ջընջւի և անհետանալ.
Նա իւր զօրքերից անհամար անգամ
Վըտանգաւոր է ինձ համար...

ՏԻԳՑԱՆՈՒՀԻ

(Առանձին) 0' ես հասկացայ... դաւաճանութիւնն
Միթէ, թագաւոր, այդքան հըրեշ է
Եղել եղբայրու:

ԱԺԴԱՀԱԿ

Անհընար հրէշ:
Եւ քեզ մնում է միան մի բան.
Կամ եղբայրասէր լինես և յսնձըդ
Առնես մեր ազդի անարդ կործանումըն
Եւ ականատես լինես իմ անկման,
Աստւածավայել կեանքից հրաժարւես,
Կամ քո սեպհական ու իմ օգուտըն
Աչքի առնելով՝ հոգսա այս մասին
Եւ քո խելացի—ես շատ վատահ եմ,
Որ դու խելացի խորհուրդներ կը տաս—
Եւ քո խելացի խորհուրդներովըն
Մեզ հետ աջակից լինես յետագայ
Մեր երկիւզայի ձեռնարկութեան մէջ:
Ուրեմըն խորհիք: Շուտով գալու են
Եւ իմ ծերունի պալատականներն
Խորհըրդակցելու: Նրբ քեզ կը կոչենք,

Դու անմիջապէս կը գաս ճանապարհ
Յոյց տալու համար, Ուրեմն խորհիր:
Իսկ ես հեռանամ:

(Գնոսմ է):

ԵՐԵՒԱՑԹ. II

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ (մենակ)

Օ՛ թշւառ եղբայր:

Քո նախագլծեր, քո ցնորքներըն
Ահա ինչպէս են իրականանում:
ԱՄենք երկոքեանըս,
Դու ասում էիր, այնպէս զօրանանք,
Որ մեր անունը ահով ու դողով
Յիշւի աշխարհիս բոլոր ծայրերում:
Թէ իմանայիր քո դաշնակիցը
Այսքան չարանենք եղեռնագործ է...
Ո՞վ պայծառ երկինք,
Դու վրկայ եղիր. այստեղ ծագել է
Դաւաճանութիւն, և սարսափելի'
Դաւաճանութիւն: Բայց միամիտ կաց,
Իմ ազնիւ եղբայր, քեզ չեմ մոռանալ.
Աչքիս առջեւ էլ սըրեր շողշողան,
Շատրւանի պէս արիւնըս ցալտի,
Թշւառ իմ եղբայր, քեզ չեմ մոռանալ:

Տեսարան Բ.

Եղեղագարդ դահլիճ, որի պատերը զարդարւած են ոսկի թերթիկներով: Թագաւորի դահուքը:

ԵՐԵՒՈՅԹ Ա1

ԱՆՈՅՆ, ՄԱՐԴՊԵՏ.

ԱՆՈՅՆ

Թագաւորին տեսա՞ր:

ՄԱՏԴՊԵՏ

Տեսար:

ԱՆՈՅՆ

Ի՞մ մասին բան չասմց:

ՄԱՐԴՊԵՏ

Ոչինչ:

ԱՆՈՅՆ

Այսպէս շուտ նա ինձ մոռացմա: Լմւ, շատ լմւ: Հիմա
ես նորան լաւ ճանաչեցի: Նա ասում էր, որ աշխարհիս երեսին
ինձ ամենից շատ է սիրում, նորա աչքի լոյն եմ, ինձ ոչ-ոքի հետ
չի փոխիլ... Այն զգելի օտարականը եկաւ թէ չէ, ինձ մոռացաւ,
դէն ձըգեց, ես էլ չը կայ նորա համար:

ՄԱՐԴՊԵՏ

Աշխարհիս բանը այդպէս է, տիկին: Մաղկի հոտը քա-
շում են, իրան դէն շպրտում: Խաղողի ողկոյզը մրգում քամում են,
իրան դէն ձգում:

ԱՆՈՅԵ

Ասա, խնդրեմ, դու չես կարող թալիսման անել, կամ մի այնպիսի մարդ քեզ յախնի՞ չէ, որ կարողանար: Զը գիտեմ ինչ անեմ: Մի խորհուրդ տներ, աղաջում եմ Թագաւորի բնութիւնը դու լաւ գիտես:

ՄԱՐԴՊԵՏ

Ոչինչ թալիսման չէ պէտք: Գեղ մի բան ասեմ—թալիսմաններից հազար անգամ լաւ, որի ազգեցութեան մասին ես երաշիաւոր եմ: Լսիր ինձ: Թագաւորի մօտ ձևացիր խղճացած, մռալլ, տիսուր Նրբ նա մօտովդ անցկենայ կամաց լաց եղիր, բայց մի տրտնջալ: Նույն շուտ հիւանդացիր, Նրբէք մի չարանալ: Յոյց տներ, որ լուռ ու մունջ հարտում մաշւում ես: Այսպէս միայն դու կարող ես Աժդահակի սիրտը շարժել և փոխել նորա յարաբերութիւնը: Այս լինի քո թալիսմանը, հետևիր նորան և դու... Հեռացիր տիկին, ոտի ձայն է գալիս: Այս բանում ես քեզ կ'օգնեմ:

(Անոլշը գնում է):

ԵՐԵՒՈՅԹ. IV

ԱԺԴԱՀԱԿ, ՄԱՐԴՊԵՏ

ԱԺԴԱՀԱԿ

Ի՞նչ ես անում այսուեղ:

ՄԱՐԴՊԵՏ

Կարմզ թագաւոր, Անոլշը...

ԱԺԴԱՀԱԿ

Անոլշը ի՞նչ է:

ՄԱՐԴՊԵՏ

Տկարացել է. իրան վատ է զգում:

ԱԺԴԱՀԱԿ

Ի՞նչու է տկարացել, ի՞նչու է վատ զգում:

ՄԱՐԴՊԵՏ

Զը գիտեմ, իմ կարող տէր: Երկու օր է անօթի է, բերանը բան չէ դնում: ինչ առաջարկում ենք, հրաժարում է, մեր թախանձանքներին լսութեամբ կամ արտասուքներով է պատասխանում:

ԱԺԴԱՀԱԿ

Ասելն ի՞նչ է:

ՄԱՐԴՊԵՏ

Զը գիտեմ, տէր:

ԱԺԴԱՀԱԿ

Գնա ասա այդպիսի ցիմարութիւններ շանի, լսում ես:

ՄԱՐԴՊԵՏ

Լսում եմ, տէր:

ԱԺԴԱՀԱԿ

Ընդունի ինչ առաջարկում են: Ասև թագաւորն է հրամայում, Աժդահակն է հրամայում, լսում ես. նորա փորացաւը ես գիտեմ, ես հասկանում եմ: Գնա այժմ: Բայց ոչ. սպասիր: Նապառկած հօ չէ:

ՄԱՐԴՊԵՏ

Ոչ թագաւոր, ոոի վերայ հիւանդ է:

ԱԺԴԱՀԱԿ

Ի՞նչ է, շատ է գանգատուում:

ՄԱՐԴՊԵՏ

Զը գիտեմ, թագաւոր, ոչինչ չէ ասում:

ԱԺԴԱՀԱԿ

Շատ ժամանակ է:

ՄԱՐԴՊԵՏ

Կը լինի. բաւական ժամանակ կը լինի:

ԱՃԴԱՀԱԿ

Տիսուր հօ չէ:

ՄԱՐԴՊԵՏ

Սաստիկ տիսուր է:

ԱՃԵԱՀԱԿ

Նատ լմւ: Նւազածու և պարող կանանց նորա սենեակը
տար, ես էլ գալիս եմ:

ՄԱՐԴՊԵՏ

Զոյդ աչքիս վրան, կարճ թազաւոր:

(Գնում է)

ԱՃԴԱՀԱԿ

Խորհրդակիցներս երեխ շատ կ'ուշանան: Օ՛հ. արել տես
հրտեղ է: Կը հասնեմ: Ուզում են թաղ գան սպասեն: ոտները չեն
կոտրւիլ Երթամ տեսնեմ իմ Անոյշի ասելն ի՞նչ է, որ այն տե-
սակ բաներ է անում:

(Աժդահակը գնում է: Հեռուից լուսում է մեղմա-
ձակն նւազածութիւն: Մտնում են Հարպագէսը և 7 խորհրդակիցը)

ԵՐԵՒԱՅԹ Վ

ՀԱՐՊԱԳԷՍ. 7-րդ ԽՈՐՀՐԴԱԿԻՑ.

ՀԱՐՊԱԳԻ

Այն մեր պատուելին՝ հեշտասիրութեան
Անկողնից ելած երաժշութեամբ
Եւ կանանց պարով կազդարում է իւր
Թուլացած մարմինն, թըմրած ուղեղն,
Որպէս զի այսօր ողջամիտ, զւարթ
Խորհրդակցելու մեզ ներկայանաց:

7-րդ ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Բայն միայն կամաց: Թէպէտ վլասոահ եմ
Քո ըզգուշութեան և խելքի վրան...

ՀԱՐՊԱԳԵՍ

Երանի քաղցրիկ այդ նւազի տեղ
Այսուեղ լըսւէին բուերի վայուն
Եւ զբզջիկների ճարճառում միայն...
Ո՞հ, Դէյօ'կ, Դէյօ'կ, մեր ճըշտասէր,
Իմաստուն, ըզգօն մեր մեծ թագաւոր...
Եթէ որ յանկարծ նա կենդանանար
Եւ մի աչք ձըգէր այս գահի վրայ
Եւ տեսնէր այնուեղ, ուր բազմում էր նա,
Մեր ամբարիշտըն է սըբբազզծում;
Գիտե՞ս, սիրելի՛ս, թէ նա ինչ կանէր:

7 ԽՈԲՀՅՈՒԱԿԻՑ

Կը տըխրէր սաստիկ և կը վըշտանար
Մեր մեծ Դէյօկը:

ՀԱՐՊԱԳԵՍ

Ազրիւրի նըման
Կը կարկաջէին արտասուքները
Նորա աչքերից... Եւ իւր նըզովքին
Դեռ հէկեկանքը միախառնելով՝
Կը շաստէր իսկոյն հեռանայ, կորչել
Այս փուչ աշխարհից: Իւր գահակալի
Դատապարտելի հիւանդոս դէմքից
Եւ հըրէշաւոր, տըսւփոս պատկերից
Նորա աչքերը կը մըթնանալին:
Գանձարանի ցեց, ըստահակ և պիղծ...
Իւր հօրըն անգամ մի եղունգի չափ
Էլ չէ նըմանում: Մեծ Կիաքսարի
Դիւցազնական վեհ, վըսեմ անունը
Հոգւոց է խըլում ծերերի սըրովից
Ախով ու վախով: Ո՞հ Ախրիմանի
Եւ չար դեերի դու պիղծ օթեան:

7-րդ ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Կամաց և ըզգոյշ, եթէ վըրէժըդ
Սուրբ է քեզ համար:

ՀԱՐՊԱԳԵՍ

Այս մաղձըն ու թոյնն, որ տասը տարուց
Աւելի է այստեղ կատաղած եռում
Եւ պըլաբլում են ինչպէս հըրաբուխըն
Դէմիաւէնի, Ես շատ եմ լլուել
Եւ շատ լլուելուց իմ կուրծքըս հիմա
Պայթել է ուզում:

7-րդ ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Զարմանալի մարդ.

Երբ քո տանն էինք մենք երէկ ճաշի,
Եւ ոգեսրւած ես խօսում էի
Մեր գործի մասին, դու թառանչելով
Յոգնած ձիու պէս կարծես շընչասպառ,
Բացականկութեամբ, կըցկըսուր, անկապ
Խօսքերով միայն և խորհրդաւոր
Գըլխի շարժումով և մըռայլ դէ՛քով
Յայտնում էիր դու քո սրտում պահած
Մաղձըն ու թոյնն: Խսկ այստեղ,
Այս գահոյքի մօտ, որից փըչում է
Արեան հոտ միայն... ի սէր զառամեալ
Քո աղեսր հօր:

ՀԱՐՊԱԳԵՍ

Աղջականն էի,

Նորա մըսերիմ և յարգւած ծառան.
Խնչպէ՛ս վարձատրեց հաւատարմութիւնս
Այն ապերախտը Երբ նա սարսափած
Անմիտ երազից (վաւաշոտները
Կամ սարսափելի կամ գծուծ կեղտոտ

նրազ կը տեսնեն), դըստեր անդրանիկ
 նորածին մանկան իմ վըզիս դըրաւ
 Խեղդամահ անեմ, և երբ խեղճուկի
 Անմեղ, գեղեցիկ ժըպիտով խախտւած,
 Զը կամենալով չար մարդասպանի
 Անքաւելի մեղքը հոգուս վերայ ստնել,
 Արքայի հովեին յանձնեցի նորան,
 Որ նա կատարէ տիրոջ հրամանը,
 Նա, ինչպէս բարի գորովագութ հայր,
 Խեղտում չէ նորան, այլ, զաւակի պէս,
 Աշխարհից գաղտնի պահում է իւր մօտ
 Եւ մեծացընում այն երեխացին:
 Յանկարծ դիպւածըն և ճակատագիրըն,
 Տաւը տարուց յետ, արքայի առջեւ
 Յախոնում են կըրկին
 Ազատ, համարձակ խոհուն իւր թուան, —
 Մեր թագաւորը, փոխանակ անհուն
 Յընծութեան, անհուն շընորհակալութեան,
 Ի՞նչ բերաւ գըլիսիս: Իմ միակ որդուս,
 Իմ ծաղկափրթիթ կայտառ զաւակիս,
 Որ մըլիթարանք էր ծերութեանը,
 Մոլի նենդութեամբ արքունիկ քարշեց,
 Կառնուկի նըման մորթելուց յետոյ,
 Նորա մըսիցըն և ոսկորներից
 Վայրենի ուաեսա պատրաստել տըւեց.
 Եւ, հրաւիրելով ինձ իւր խընջոյքին,
 Կերակըրեց հօր զաւակի մըսով.
 Եւ վերջումըն էլ իմ որդուս կըտրած,
 Արիւնոս գրլուխըն առաջիս դըրաւ
 Եւ գոռոգութեամբ ու լիրբ պարծանքով
 Բորենու նըման մըուընչեց այսպէս.
 Հշարպմագ, բաւակմն ես դու իմ ճաշից,
 Լամ էր նայ: Եւ ես ողբալու տեղակ,
 Թէպէտ արիւնըս իմ գըլիսիս զարկեց

Եւ իմ աչքերըս ուռան, լըցւեցին
 Արտասուզքի տեղ կարմիր արիւնով,
 Ես ինձ պահեցի և դողդոջ ձայնով
 Ու հանդարս այսպէս ես մըրմընծացի.
 «Բաւական եմ, տէր, բոլորը լաւ է
 Ինչ որ անում է մեր թագաւորը»:
 Այն ժամփց ըսկաած ես կենդանի եմ
 Վըրէժիւընդրութեան միայն կրակով,
 Եւ զիշեր ցերեկ աչքիս առաջից
 Ել չեն հեռանում արիւնաշաղախ
 Որդուս գըլուխը և Աժդահակի
 Արկտի կերպարանքը: Այժըմ հասել է
 Իմ փափաղելի, անձկալի ժամըն,
 Եւ շարագործի վերջին օրերը
 Հաշւած են արդէն: Նա պիտի ընկնի
 Իւր բարձրութիւնից: Նորա դիւական
 Ամեն մի քայլից մի օձ է աճել,
 Նորանից ծածուկ, որ միահամուռ
 Կը յարձակւեն շուտով և բոլորովին
 Նորա մարմինը ոտից մինչեւ դըլուխ,
 Թունալից խայթերը կը ցըցեն նորա
 Նազուք մըսի մէջ: Եւ իւրաքանչիւր
 Նորա արարքը, որ հազարների
 Սըրտեր է այրել ինչպէս կայծակի
 Անդրադարձ հարւած, կը ճայթէ շուտով
 Նորա պիղծ գըլիսին: Արդէն մեր բոլոր
 Մեծամեծները ինձ հետ համաձայն
 Եւ համամիտ են, միաբանութեան
 Ամուր կապերով կատել եմ նոցա:
 Եւ ժողովը իսուլ գանգասները
 Եւ խուլ աըրտունջը գըրաւական են
 Մեր յաղթանակին: Արդէն կուրուշը...
 Այսօր ականջիդ ոչինչ չէ հասել
 Կուրիշի մասին:

7-րդ ԽՈՐՀԲԴԻԱԿԻՑ

Խնչ կայ, որ... ոչինչ:

ՀԱՐՊԱԳԻԵՍ

Խսկ ինձ հասել է: Խւր պարսիկներին
 նա գլուղուել է և պատրաստում է
 Ապրատամբութեան և արշաւանքի:
 Խմ խըրախոյսը և յորդորանքը
 Ընծաների և խոստումների հետ
 Երևի արդէն հասել են նորան:

7-րդ ԽՈՐՀԲԴԻԱԿԻՑ

Ուրեմն մթնում է մեր հայրենիքը:—

ՀԱՐՊԱԳԻԵՍ

Խեղճ Մարաց գըլիսին
 Երկինքը վաղուց, վաղուց է սկզել—
 Մեծ Կիաքսարին թաղումից յետոյ:
 Մեր ողորմելին դեռ յոյս է տածում
 Երկար անպատիժ թագաւորելու:
 Բի՛ւր անգամ արխմար, եթէ կարծում է,
 Գաղանաբարոյ և պիղծ գործերըն
 Զուր անհետեանք կարող են անցնել:
 Թոքախտից խեղտւած—դեռ չէ հաւատում
 Խւր հիւանդութեան:

7-րդ ԽՈՐՀԲԴԻԱԿԻՑ

Խսկ մեր ծերեքը...

ՀԱՐՊԱԳԻԵՍ

Բոլորեքեան էլ, բացի երկուսից —
 Վիրաւորւած են բանակալիցըն:

7-րդ ԽՈՐՀԲԴԻԱԿԻՑ

Ուրեմն ինչպէս խոստովանեցիր
 Ինձ ճանապարհին, դու ամենեին:

Բան չես մըստածելու նա քո կարծիքը
Գընահասում է. պահանջելու է
Գեղնից մի խորհուրդ:

ՀԱՐՊԱԳԵՍ

Ժամանակ վատնել

Այդ բանի համար ինձ բոլորովին
Աւելորդ թւաց: Խ՞ոչ է դանդաղում
Տիրոջ սիրելին, նորա հետ և ես
Համակարծիք եմ: Միմիայն մի բան
Յայտնի է ինձ քաջ, որ մեր արքայի
Բոլոր խորամանկ ու շափած ձևած
Նախազըծերըն անշահ, անօգուտ
Շուր պիտի պայմեն պըզպըծակի պէս,
Խւր հին սխալներըն և հին յանցանքներն
Խ՞նչով է ուզում անհետացընել, —
Նոր սըխալներով և նոր յանցանքով:
Բայց իմ Կուրուշը քընած չէ այժմ,
Խելագարւած չէ մինըն Տիգրանը,
Դեռ իմ այս սիրոն իմ ուղեղըս
Գայլի, շըների և անգրդների
Գէշ-որս չէ դառած, ոչ մէկի գլխից
Մի հատ մազ անգամ պակասելու չէ:
Եթէ առաջիս խործեր են ընկած,
Քայլըս չեմ փոխիլ. ես աչքեր ունիմ:
(Մտնում են 1-ին և 2-րդ խորհրդակիցները.)

ԵՐԵՒՈՅԹ. VI

ՀԱՐՊԱԳԵՍ. 1-ին, 2-րդ և 7-րդ ԽՈՐՀՐԴԱԿԻՑՆԵՐԸ.

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Խ՞ոչու այդպէս շուտ:

ՀԱՐՊԱԳԵՍ

Ես կարծում էի դուք եք ուշացել:

1-ին ԽՈՐՀՄԴԱԿԻՑ

Ո՞ւր են միւսները. ի՞նչու չեն գալիս:

ՀԱՐՊԱԿԻՍ

Ես էլ լինէի արքայի «աչքը»,
Քեզ նըման ես էլ կը գուգոսացի
Տեղի-անտեղի:

1-ին ԽՈՐՀՄԴԱԿԻՑ

Նայիր ինձ, Հարպակ,
Դու անըզգոյշ ես:

ՀԱՐՊԱԿԻՍ

Ինձ էլ յայտնի է.
Ես մեղաւոր եմ:

(Մտնում են միւս խորհրդակիցները)

ԵՐԵՒՈՅԹ VII

ՀՄՐՊԱԿ. 1, 2, 3, 4, 5, 6, և 7-րդ ԽՈՐՀՄԴԱԿԻՑՆԵՐԸ.

1-ին ԽՈՐՀՄԴԱԿԻՑ

Ի՞նչու ուշացաք: Ինչու չէք գալիս
Խւր ժամանակին, ըսպասում էիք դոք,
Որ թագաւորը մարդիկ ուղարկէ
Զեր ետևից, համ:

4-րդ ԽՈՐՀՄԴԱԿԻՑ

Ես ասուածներին

Աղօթում էի մեր թագաւորի
Բոլոր մեղքերի թողութեան համար.
Հստիպում էի և ժողովրդին
Նոյնպէս աղօթեւ:

4-ին ԽՈՐՀՄԴԱԿԻՑ

Իսկ դու մւր էիր.

5-րդ ԽՈՐՀԻՐԴԱԿԻՑ

Ես ներկայ էի մի կնոջ գըլլսատման,
Որ պատիժ կըրեց մեր թագաւորի
Հըրամանովը իւր անառակութեան
Յանցանքի համար, և այս պատիժը
Պիտի ծառայէ իրբեւ օրինակ
Ըստահակներին, ինչպէս այդ ասաց
Մեր թագաւորը:

1-ին ԽՈՐՀԻՐԴԱԿԻՑ

Իսկ դու մւր էիր:

6-րդ ԽՈՐՀԻՐԴԱԿԻՑ

Ես խօսում էի մեր թագաւորի
Մի լըրտեսի հետ, որից նոր համբաւ
Այս օր իմացայ:

1-ին ԽՈՐՀԻՐԴԱԿԻՑ

Ի՞նչ բան է: Խչմ
Վաղօրօք դու ինձ չես յայտնում, եթէ...
(Մտնում է Աժդահակը, զահուքը բարձրանալով բազմում է)

ԵՐԵՒՈՅԹ. VIII

ԱՃԻԱՀԱԿ, ԽՈՐՀԻՐԴԱԿԻՑՆԵՐ

ԱՃԻԱՀԱԿ

Սիրելիներս, ողջոյն ձեզ:

ԲՈԼՈՐԵՔԵԱՆ

Ողջոյն,

Կարող թագաւոր:

ԱՃԻԱՀԱԿ

Կասարեցի՞ր դու

Իմ հըրամանը:

5-րդ ԽՈՐՀՅՈՒԱԿԻՑ

Կատարեցի, աէր:

ԱԺԴԻԱՀԱԱԿ

Քեզ շընորհում եմ ոսկի գաւազան,
Որ այսուհետեւ դու կըրփնապատիկ
Եռանդով վարես ըստանձնած պաշտօնըդ:
Անառակներին դու այսուհետեւ
Ացդպէս կը պատժես: Խնձ հաճելի չէ,
Որ օր ըստ օրէ բազմանան մեր մէջ
Ացդպիսի լրրբերն ու ապականեն
Մաքուլներին էլ իրանց զզելի
Օրինակովը: Ես կամենում եմ
Եմ տէրութեան մէջ հէշ չը կատարեն
Երնութեան գործեր. ես կամենում եմ,
Որ ժողովուրդըս անարատ լինի.
Լըսմամ էք, ծերեր, որ յստակ մնայ
Եմ ժողովուրդըս: Մեր օրէնքն էլ
Այդ է պահանջում: Աւազակներին,
Խաբեբաններին և զոցա նըման
Սըրիկաններին սաստիկ կը պատժես
Դու այսուհետեւ. նոքա մաշում են
Տէրութեան հիմքը: Այդ տեսակ ախտից
Զը պէտք է լինին իմ հողի վերան:
Եւ եղանակները շուտ արմատախիլ
Մենք պէտք է անենք: Եւ դորա համար
Պիտի լինէք խիստ, անողոքելի:
Ահըն ու երկիւղն Մեղացու սըրտից
Պիտի չը հեռանան: Լըսմամ էք, ծերեր:

ԲՈՂՈՐԾՔԵԱՆ

Լըսմամ ենք, արքայու

ԱԺԴԻԱՀԱԱԿ

Ասացէք տեմնեմ, թէ ի՞նչ էք խորհել

Մեր գործի մասին, թէ ի՞նչպէս վանենք
Մենք այն վրտանգը, որ ըսպառնում է
Մեր հայրենիքին: Խնչ մընում է ինձ,
Խօսքի քաղցրութեամբ ինձ հընար եղաս.
Արդէն զըրաւել թագուհու սիրուը.
Համաձայն է նա մեզ հետ եղբօր դէմ
Դաւագործ լինել:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Կարճ թագաւոր,
Գիշեր ու ցերեկ երկար ու բարակ
Խորհելուց յետոյ վերջապէս գոտայ
Մի յարմար միջոց:

ԱԺԴԱՀԱԿ

Շատ բարի, տեսնե՞նք:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Ամենից առաջ մարդիկ ուղարկենք
Տիգրանին մեզ մօտ հըրաւիրելու:
Խակ մենք նախապէս մի ճոխ փառաւոր
Խընջուք կը սարքենք: Տիգրանը կը գայ...

ՀԱՐՊԱԳԻՍ (առանձին)

Դու էլ վեր կառնես, կը սպանես նորան:

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Տիգրանը կը գայ, և մենք կ'ընդունենք
Նորան հանդիսով, ինչպէս վայել է
Այդ թագաւորին: Այնուհետև գինին
Մէջաեղ կը բերենք և խըմիչքներով
Խորա գըլուխը կը շըմեցըներով
Յետոյ, երբ ապշած՝ անդամալուծի
Խըման նա գետին ընկնէ, մենք իսկոյն
Կը քաշենք նորան մի խոր փոսի մօտ...

ՀԱՐՊԱԳԵՍ (առանձին)

Անմի՛տ Խըրսուիլակ:

ԱԺԴԱՀԱԿ

Առանց գինու էլ
 Դըժար չէ անել ինչ կամենում ես.
 Բայց հետևանքը երկիւղալի է:

2-րդ ԽՈՐՀԾԻԱԿԻՑ

Մի դեսպանութիւն յղենք նորա մօտ,
 Որ յայտնես նորան, իբրև թէ մի մեծ
 Նրշանաւոր զործ պահանջում է ձեր
 Անձամբ տեսութեան: Կարող թագառո՞ր,
 Խնձ թւում է թէ այսպիսի պատրասկ
 Կարող է նորան գըրաւել մինչև
 Մեր սահմանները, ուր մենք վաղօրօք
 Լարած կը լինենք մեր որոգայթը:
 Եւ այնուհետև...

ԱԺԴԱՀԱԿ

Այդ լաւ ասացիր
 Արելս վըկայ, այդ լաւ ասացիր.
 Խնչ կասէք, ծերեր:

ՀԱՐՊԱԳԵՍ

0'հ. սարսափելի

Խելացի խորհուրդ:

ԲՈԼՈՐԵՔԵԱՆ (բացի 1-ինից)

Խելացի խորհուրդ:

1-ին ԽՈՐՀԾԻԱԿԻՑ

Այնպէս եմ կարծում Տիգրանը չի գալ:

ԱԺԴԱՀԱԿ

Իսկ ի՞շու:

1-ին ԽՈՐՀԲԴԻԱԿԻՑ

Այնպէս: Նա չի գալ: Գիտեմ:

ԱԺԴԱՀԱԿ

Խնչպէս տեսնում եմ անհըրաժեշտ է
Այսուեղ թագուհու ներկայութիւնը.
Անկասկած մեզնից նա աւելի լաւ
Մօտիկ է, տեղեակ եղբօր բնութեան
Եւ հակումներին, մեզ կարող է տալ
Գործնական խորհուրդ: Ուրեմն նրան
Այսուեղ կանչեցէք:

6-րդ ԽՈՐՀԲԴԻԱԿԻՑ

Մինչեւ տիրուհու գալը, թագաւոր,
Հըրաման տնեւր ինձ մի լուր հաղորդեմ,
Թէպէտ անարժան, անախորժելի...

ԱԺԴԱՀԱԿ

Անախորժելի'... շուտ ասա տեսնեմ...
Արիւնըս իառնեց:

6-րդ ԽՈՐՀԲԴԻԱԿԻՑ

Կարող թագաւոր,

Մեր հաւատարիմ լրտէսի խօսքով
(Նա Պարսկաստանից է ուղիղ գալիս
Եւ իջևանել է իմ տանըս մէջ)
Քո խաղաղասէր, խոնարհ, հըպատակ
Պարսիկների մէջ ըսկըսել է չար
Ալէկոծութիւն, երկրաշարժին
Նախընթաց մի խուլ, ըստոր երկրային
Դըղլըրդոցի պէս. դա ոչինչ բարի
Մեղ չէ գուշակում: Քո թոռըն, արքայ...

ԱԺԴԱՀԱԿ

Անունը չը տաս...օ՛ դու, Հարսպագէս,

Այս քո բանը չէ...

6-րդ ԽՈՐՀՅՈՒԱԿԻՑ

Ճոխ, վարթամ առաստ իւր խնջոյքներով,
Եւ շնորհներով
Իւր լիաձեռն խոստութներովը
Նա խախտել է ողջ ժողովուրդը
Եւ այժմ աշբողջ առելի ազգը
Պաշտում է նրան ինչպէս աստծուն,
Եւ ըսպասում է նորա մի խօսքին:

ԱԺԴԱՀԱԿԻ

Լըստում ես, Հարսպադ:

ՀԱՐՊԱԳԻՑ

Լըստում եմ, արքայի:

ԱԺԴԱՀԱԿԻ

Եւ դու չե՞ս դողում:

ՀԱՐՊԱԳԻՑ

Ո՛չ, կարող թագաւոր:
Ու մենից, թագաւոր, մի երեխայից

ԱԺԴԱՀԱԿԻ

Անպէտք արարած.

Ես ավաստում եմ, որ զաւակիու հետ
Քո թղթերըն էլ չը խորովեցի:

ՀԱՐՊԱԳԻՑ (մօտենալով գահին)

Ես մեղապարտ եմ: Սուրը քո ձեռիդ,
Եմ պարանոցը—քո ուսերի տակ:

ԱԺԴԱՀԱԿԻ

Թէ արի և քաջ չը լինէիր դու¹
Պատերազմի մէջ, այս ժամիս ահա

Այս գահովքի տակ ես քո զլուկիւ
Կը տապահէի:

ՀԱՐՊԱԳԵՍ

Արբանց ինձ ներիր,

Կարծի թաղաւոր: Ես ճիզ կը թափեմ
Եւ մի յանցանքըս կը ջանամ քաւել
Հազար շահաւէտ գործերով:

ԱԺԴԱՀԱՆ

Սակայն

Երդւմեմ ես:

ՀԱՐՊԱԳԵՍ

Այս Միհրի անունով

Երդւմեմ եմ, արքայ:

ԱԺԴԱՀԱԿ

Ես հաւատում եմ:

Սիրելիս, գնա դու էլ պատրաստէիր
Դէպի Պարսկաստան:

ԵՐԴ ԽՈՐՃՐԴԱԿԻՑ

Զոյդ աչքիս վրայ:

ԱԺԴԱՀԱԿ

Կուրուշին այստեղ ինձ մօտ կը բերես
Կասես, թէ պապըդ քեզ կարօտել է,
Ուզում է տեսնել նորա հետ քաղցըր
Եւ լսւ կը վարւես: Թող մի գայ այստեղ
Մեր այն շար օձը, որին խըզճալով,
Երազարսնիս խելքին ընկնելով,
Ես արձակեցի, և որը հիմա
Նենզութեամբ լրցւած՝ սողում է դէպի

իմ խաղաղ գահը իւր հարազատին
Խածելու համար. թող նա զայ այստեղ,
Աչքիս երևազ, օ՛հ իմ արևով
Ահա երդուում եմ, նորա զլուխը
Այս զայիսնով պիտի ջախջախեմ,
Եւ կը սովորցնեմ այն անիրաւին
Աղըստամբւելու եղանակները:
Սիրելիներըս, ինչպէս տեսնում էք,
Դեռ ևս մեր հին վէրքը չը բուժած,
Մեր կըրծքի վրայ կանչեցի ահա
Մի վրասնզաւոր թարախոտ պալար:
Սիրելիներըս, դուք պիտի օդնէք
Զեր թագաւորին, յուսահատութեան
Ինձ չը հասցընէք:

(Մանում է Մարդաբար)

ՄԱՐԴՊԵՏ

Կարող թագաւոր, մեծ-մայր թագուհին պատրաստուուց՝
Էր գալու, բայց յանկարծ ուշաթափ եղաւ և ընկաւ գետին:

ԱԺԴԱՀԱԿ

Այսօր ուրեմն այս բանը մընաց,
Էդուց դուք կը գաք—ես կը հաղորդեմ
Նորա խորհուրդը: Եւ ապա կանենք
Մեր անելիքը:—Գընացէք բարով! (Գնում է):

ԵՐԵՒՈՅԹ. IX

ԽՈՐՀՄԱԿԻՑՆԵՐ

ՀԱՐՊԱԳԵՍ

(6-րդ խորհրդակցին) Այսօր դու ինձ մօտ ընթրիքի կը գաս-

Տեսարան Գ.

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ, ԳՈՀԱՄԻԿ

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Այստեղ մարդ չը կայ:

ԳՈՀԱՄԻԿ

Խշմւ, Խ՞նչ կայ որ: Խ՞նչու այդքան յուզւած շփոթւած է
տիրուհիս:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Եթէ հարկաւոր լինի, որ դու գնաս այնտեղ — կերթաս թէ ոչ:

ԳՈՀԱՄԻԿ

Ո՞ւր: Խ՞նչ բանի համար:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Արմաւիր: Յետոյ կասեմ բնչու համար: Առժամանակ դա
պիտի ծածուկ մնայ: Ես քեզ կը զգեստաւորեմ այնպէս, որ քեզ ոչ
ոք չի ճանաչիլ: Կ'երթաս: Այս: Այս, սիրելիս, կ'երթաս, կ'երթաս:

ԳՈՀԱՄԻԿ

Ո՛չ. Ես ի՞նչպէս կարող եմ—ինձ կը սպանեն, կտոր կտոր
կանեն:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Մենակ չես գնայ, սիրելիս: Քեզ հետ մարդ կը դնեմ: Առ,
քեզ լինին այս աղամանդէ մատանին, այս ապարանջանը, այս օղակ-
ները: Երբ գնաս և վերադառնաս, քեզ աւելի լաւ բաներ կ'ընծայեմ:
Կ'երթաս թէ ոչ:

ԳՈՀԱՐԻՒ;

Կ'երթամի Միայն պէտք է ասես այդ ի՞նչ բան է, որ ծածկուժ ես:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ:

Ի հարկէ, սիրելիս, էլ ում պէտք է յախնեմ; եթէ ոչ քեզ; Իր ժամանակին կիմանասաւ Հիմա ինձ համար էլ այդ բանը գեռ բողոքովին պարզ չէ, գեռ մուլթ է:

ԳՈՀԱՐԻՒ;

Կ'երթամի Անպատճառ կ'երթամի Մօրս, ազգականներիս էլ կը տեսնեմ. շատ կարօտել եմ; Ե՞րբ գնաց:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ:

Ես կասեմ երբ: Այժմ իմ առանձնաւենեակս գնանք:

(Կը շարուճակվ)